Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11002/2024-ԿՆ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 4. Երևան - 4 |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04 – 30.062024թթ. |
| Ներկայացման օր | 03.07.2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան<br>սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

Digitally signed by
MKHITARYAN
YERVAND
2508730335
Date: 2024.07.08
14:14:20 AMST

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են՝

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկում և խնամք,
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության** տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողի կողմից իրականացված տնայցերի միջոցով աջակցություն է տրամադրվել 75 շահառուի Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքներում: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է կարիքի գնահատում և վերագնահատում, որի արդյունքում կատարվել է 19 դեպքի վարում՝ տարեկան վերափաստագրման 12 դեպք, նոր անձնագրի ստացման 6 դեպք, թվով 1 շահառու անցել է Անձի ֆունկցիոնալության խանգարում՝ հաշմանդամության խումբը վերահաստատելու նպատակով: Եռամսյակի ընթացքում միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնից ձեռք է բերվել թվով 27 շահառուների համար միավորների տեղեկանք՝ դեղերի ստացման, բժշկական կենտրոններում անվճար հետազոտություններ անցնելու, նոր անձնագիր ստանալու համար և այլն: Սոցիալական աշխատողը թվով 6 շահառուի միջնորդել և ուղղորդել է միասնական սոցիալական ծառայություն՝ օժանդակ պարագաների ձեռք բերման նպատակով, կենսաթոշակի վերահաստատումը կազմակերպելու նպատակով, նոր անձնագիր ստանալու նպատակով և այլն:
  Կարիքների վերհանման արդյունքում հոգեբանական աջակցության կարիք ունեցող 7 շահառուի հոգեբանի կողմից տրամադրվել է մասնագիտական հոգեբանական աջակցություն, որը միտված է եղել անձի ինքնասպասարկման կարողությունների զարգացմանը, հոգեբանական կայուն վիճակի պահպանմանը, հիշողության ամրապնդմանը, սթրեսակայունության ձևավորմանը, պահպանմանը, անձի հուզական և մտավոր ունակությունների ու հմտությունների զարգացման ու ճգնաժամային իրավիճակներին համապատասխան վարքի դրսևորման հնարավորությունների ստեղծմանը:
  Խորհրդատվական աջակցության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում իրականացվել է շահերի պաշտպանություն:
  Ազատ ժամանցի կազմակերպման շրջանակներում կազմակերպվել է 7 միջոցառում, որոնց մասնակցել է թվով 5 շահառու.
  - ✓ Առնո Բաբաջանյան համերգասրահ, ազգային նվագախմբի համերգ,
  - ✓ Ներգնա տուր դեպի Արագածոտնի մարզ,
  - ✓ Առնո Բաբաջանյան համերգասրահ, «Ակունք» ազգագրային համերգ,

- ✓ «Սպենդիարյանի անվան Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն, «Ժիզել» բալետային ներկայացում՝ Անգլիայի ազգային բալետի կատարմամբ,
- ✓ Ներգնա տուր դեպի Կոտայքի մարզ՝ Ծաղկաձորի Կեչառիս եկեղեցի և դեպի Հրազդան՝ Շառլ Ազնավուրի անվան զբոսայգի,
- ✓ Ներգնա տուր դեպի Վայոց ձորի մարզ՝ քաղաք Ջերմուկ՝ Սուրբ Գայանե եկեղեցի, «Ջրահարսի վարսեր» ջրվեժ, հանքային ջրերի ըմպելասրահ,
- ✓ Թումոյի այգում բացօթյա բալետային ծրագրի շրջանակներում Ֆեոդոր Շալյապինին նվիրված երեկո:

- **Կենցաղային սպասարկման և խնամքի ծառայության տրամադրման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրվել 75 շահառուի: Յուրաքանչյուրին իր գնահատված կարիքից և ինքնասպասարկման կարողությունից ելնելով աջակցություն է տրամադրվել բնակարանի մաքրության և անձնական հիգիենայի պահպանման հարցում, գնումների կոմունալ վարձավճարների իրականացման, սննդի կազմակերպման, բարեգործական ճաշարանից կերակրի տուն բերման, անհրաժեշտության դեպքում՝ կերակրման հարցում: Անհրաժեշտության դեպքում իրականացվել է ուղեկցում՝ գնումների, զբոսանքի կամ շահառուի կարիքի բավարարման նպատակով համապատասխանաբար այլ վայր:
- **Բժշկական օգնության տրամադրման** շրջանակներում տունայց է իրականացվել 75 շահառուի՝ ուղղված շահառուների առողջական վիճակի վերահսկմանը, տանը առկա դեղորայքի պիտանելիության ժամկետի ստուգմանը: Հաշվետու ժամանակահատվածում անվճար դեղորայքի իրավունք և տեղաշարժման սահմանափակում ունեցող թվով 32 շահառուի համար պետական պատվերի շրջանակներում տարբեր պոլիկլինիկաներից և բժշկական կենտրոններից ձեռք է բերվել անվճար դեղորայք: 13 շահառու ուղեկցվել է բժշկական տարբեր հաստատություններ՝ հետազոտման, ախտորոշման, բուժման նպատակով, այդ թվում շահառու նեղ մասնագետների մոտ: 4 շահառուի համար բուժքրոջ կողմից կատարվել է տնային պայմաններում հետազոտությունների իրականացման կազմակերպում, 8 շահառուի համար կատարվել է գլյուկոմետրիա, 2 շահառուի համար կատարվել է միջմկանային ներարկում (շարունակական): 5 շահառուի համար կատարվել է սպասարկող պոլիկլինիկայի փոփոխություն: Թվով 9 շահառուի համար կատարվել է անվճար բուժհետազոտության կազմակերպում՝ ընտանիքի անապահովության միավորի մասին տեղեկանքի առկայությամբ: 5 շահառուի համար կատարվել է դեղորայքային գնումներ (շարունակական), 4 շահառուի համար տեղամասային պոլիկլինիկայից վերցրվել է բժշկական քարտից քաղվածք, 1 շահառուի համար տեղամասային պոլիկլինիկայից վերցվել է վերջիններիս հսկող բժշկի կողմից նշանակված դեղորայքային բուժման դեղատոմսը և հանձնվել շահառուներին:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել է հետևյալ նյութերը.

- Ներգնա տուր դեպի Արագածոտնի մարզ՝ քաղաք Ապարան, Սաղմոսավանք, (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/ceagzn
- Ներգնա տուր դեպի Կոտայքի մարզ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/zragya
- Ներգնա տուր դեպի Վայոց ձորի մարզ՝ քաղաք Ջերմուկ, նաև Նորավանք (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid0o1c6QALEJz7EGvnQqDoeDqSfDGp425SkFvYFx1K672XXVceKDuGVGGEKTnUMCauml&id=100034275520193
- Երևանի քաղաքապետարանի հրավիրմամբ Ակրամ Խան Ժիզել բալետ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/dnzbpy

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկում և խնամք,
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

- Երկրորդ եռամսյակի ընթացքում սոցիալական աշխատողների համար կազմակերպվել է «Սոցիալական դեպքի վարման մեթոդաբանություն» թեմայով վերապատրաստման դասընթաց:
- Երկրորդ եռամսյակի ընթացքում հոգեբանն անցել է 2 ժամ անհատական սուպերվիզիա:
- Մայիսին հոգեբանը անհատական նախաձեռնությամբ մասնակցել է «Հայկական հոգևոր վերականգնման» հիմնադրամի կողմից կազմակերպված 18 ժամ տևողությամբ «Նարատիվային թերապիա» խորացված դասընթացին:
- Հունիսին հոգեբանը անհատական նախաձեռնությամբ մասնակցել է «ԵՊՀ կիրառական հոգեբանության կենտրոնում» կազմակերպված «Բրեյնսփոթինգ» միջազգային ինտենսիվ դասընթացին:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 73/75 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 67 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 5 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 4 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 5 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 70 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա –0<br>Բ - 75 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 75 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 75 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 75 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 5 |
| 6. | խորհրդատվական օգնություն | - |
| 7. | այլ ծառայություն (*նշել*) հոգեբանական խորհրդատվություն | 7 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «03» 07.2024թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)